



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. մարտին /վերլուծություն/

2012թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13808 գործարքներ, որոնց քանակը 2012թ. փետրվարի համեմատ նվազել է 4.5%-ով, իսկ 2011թ. մարտի համեմատ՝ 19.5%-ով:

2012թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3608 օտարման գործարքների 76.8%-ը կազմել են առուվաճառքները, 22.7%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. մարտին, 2012թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 9.4%-ով, իսկ 2011թ. մարտի համեմատ նվազել է 14.8%-ով:

2012թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. մարտին, 2012թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.7%-ով, իսկ 2011թ. մարտի համեմատ նվազել է 12.3%-ով:

2012թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2011թ.	մարտ 2012թ.	փետրվար 2012թ.
Կենտրոն	451600	400000	400000
Արաբկիր	348200	333050	334000
Քանաքեռ-Զեյթուն	269500	260000	260100
Նոր-Նորք	224800	225050	225000
Ավան	228200	233000	234000
Էրեբունի	234800	233100	233400
Շենգավիթ	233000	229000	229100
Դավթաշեն	255600	254500	254600
Աջափնյակ	221100	221050	221000
Մալաթիա-Սեբաստիա	219500	219750	219800
Նուբարաշեն	148000	140100	140100
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/</b>	<b>257700</b>	<b>249900</b>	<b>250100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. փետրվարի համեմատ, նվազել են 0.1%-ով:

2012թ. մարտին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 325 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. փետրվարի համեմատ նվազել է 0.9%-ով իսկ 2011թ. մարտի համեմատ է 38.9%-ով:

2012թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2011թ.	մարտ 2012թ.	փետրվար 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	137400	110000	108000
	Ապարան	47400	48000	48000
	Թալին	58500	60800	60800
Արարատ	Արտաշատ	91600	91100	90000
	Մասիս	130600	107200	105000
	Վեդի	93600	95000	95000
	Արարատ	83500	72000	70000
Արմավիր	Վաղարշապատ	148800	151000	150000
	Արմավիր	124000	116800	114700

	Մեծամոր	84000	85100	85000
Գեղարքունիք	Սևան	88900	96000	96000
	Գավառ	48600	51000	51000
	Մարտունի	87500	100000	105100
	Վարդենիս	32400	32000	32000
	Ճամբարակ	21200	21000	21000
Լոռի	Վանաձոր	90400	83500	82500
	Ստեփանավան	61600	72000	76000
	Սպիտակ	85800	98000	100000
	Ալավերդի	34500	49000	49000
	Տաշիր	38300	40000	40000
	Թումանյան	9400	11000	11000
	Շամլուղ	5700	8000	8000
Կոտայք	Աբովյան	141700	151000	150000
	Լոր Յաճճ	128200	127900	127900
	Բյուրեղավան	102600	106800	106800
	Եղվարդ	106800	108000	108000
	Հրազդան	60800	56500	57538
	Ծաղկաձոր	182000	292000	295000
	Չարենցավան	76600	82500	82500
Շիրակ	Գյումրի	109700	107000	101000
	Արթիկ	61200	64100	64100
	Մարալիկ	30200	35600	35600
Սյունիք	Գորիս	136900	115000	115000
	Կապան	101500	88000	88000
	Սիսիան	85000	78100	78100
	Մեղրի	63000	65000	68500
	Ագարակ	36500	39700	39700
	Քաջարան	62100	94050	100000
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	73700	82000	82000
	Եղեգնաձոր	107900	115100	120000
	Ջերմուկ	125200	100000	92000
Տավուշ	Դիլիջան	106800	102000	100000
	Իջևան	132000	110000	110000
	Բերդ	44300	48500	49500
	Լոյենբերյան	36200	40000	40200
	Այրում	25100	24500	24500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. փետրվարի համեմատ, նվազել են 0.1%-ով:

2012թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 408 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 105, մարզերում միասին վերցրած՝ 303: 2012թ. մարտին, 2012թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 22.9%-ով, ընդ որում Երևանում՝ 32.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 19.8%-ով: 2011թ. մարտի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.3%-ով, ընդ որում Երևանում՝ 10.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 10.2%-ով:

2012թ. մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/:

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մարտ 2011թ.	մարտ 2012թ.	փետրվար 2012թ.
Կենտրոն	471900	458800	459000
Արաբկիր	380600	364000	365000
Քանաքեռ Զեյթուն	280500	274700	274700
Նորք Մարաշ	280200	301000	301050
Ավան	240200	249200	249000
Էրեբունի	236200	219100	219500
Շենգավիթ	244300	239000	239300
Դավթաշեն	268700	257000	257500
Աջափնյակ	233400	236000	236300
Մալաթիա Սեբաստիա	229400	219000	220000
Նուբարաշեն	149200	144500	144800
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>274100</b>	<b>269400</b>	<b>269700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մարտին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. փետրվարի համեմատ նվազել են են 0.1%:

2012թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մարտ 2011թ.	մարտ 2012թ.	փետրվար 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	139900	130100	130050
	Ապարան	47800	51200	52100
	Թալին	59800	68450	70000
Արարատ	Արտաշատ	101500	97400	100000
	Մասիս	135500	110050	112000
	Վեդի	97200	99500	99850
Արարատ	Արարատ	87500	86900	88000
	Վաղարշապատ	161600	143800	145100
Արմավիր	Արմավիր	129500	99100	100000
	Սևան	95300	88300	90900
Գեղարքունիք	Գավառ	51300	44900	45500
	Մարտունի	88500	89350	90100
	Վարդենիս	34600	33000	34000
	Ճամբարակ	23000	25900	26000
	Վանաձոր	101100	94100	95050
Լոռի	Ստեփանավան	62100	86900	87000
	Սպիտակ	86500	111100	111300
	Ալավերդի	36000	42150	42150
	Տաշիր	41600	50100	51050
	Թումանյան	10800	12000	12500
	Շամլուղ	8000	13200	13200
	Ախթալա	18300	29400	29400
	Արուսյան	155700	143300	143500
Կոտայք	Նոր Զաճն	134400	127200	128100
	Բյուրեղավան	107400	119900	120000

	Եղվարդ	112500	114400	115000
	Հրազդան	64500	77000	77000
	Ծաղկաձոր	315000	303600	303700
	Չարենցավան	78200	74000	74500
Շիրակ	Գյումրի	119900	115100	115800
	Արթիկ	62300	59900	60000
	Մարալիկ	32700	48000	48000
Սյունիք	Գորիս	143000	126800	126900
	Կապան	105400	97600	97800
	Սիսիան	85400	87600	87800
	Մեղրի	65700	74000	74500
	Ագարակ	36600	45900	46000
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	74400	81200	82100
	Եղեգնաձոր	111600	109400	109850
	Ջերմուկ	123100	118400	118700
Տավուշ	Դիլիջան	108400	103000	103100
	Իջևան	133000	119800	119900
	Բերդ	45900	57700	57850
	Նոյեմբերյան	37600	45600	46000
	Այրում	26100	34200	34500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. փետրվարի համեմատ, նվազել են 0.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. մարտին հանրապետությունում օտարվել են 1178 միավոր /819.97 հա/ հողեր, որից Երևանում՝ 85 միավոր /9.80 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 643 միավոր /754.62 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /1.30 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 372 միավոր /38.83 հա/, որից Երևանում՝ 40 միավոր /3.52 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 124 միավոր /9.53 հա/, որից Երևանում՝ 36 միավոր /4.43 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 17 միավոր /4.28 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.55 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 5 միավոր /0.33 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 16 միավոր /12.29 հա/ ընդհանուր մակերեսով,
- ջրային հողեր՝ 1 միավոր /0.09 հա/:

2012թ. մարտին հանրապետությունում օտարված հողերից 1018 միավորի /733.04 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 75 միավոր /8.05 հա/, նվիրատվության գործարքներ՝ 153 միավորի /84.64 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /1.75 հա/ և փոխանակության գործարքներ՝ 7 միավորի /2.29 հա/:

Հանրապետությունում 2012թ. մարտին, 2011թ. մարտի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 8.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 21.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 184.60 հա, որից 179.16 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 14.6%-ը կան 149 գործարքներ /105.59 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, իսկ 85.1%-ը կան 866 միավորը /619.72 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից երևանում` 75 միավոր /8.05 հա/: 2012թ. մարտին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 3 գործարք /7.74 հա/:

Ստորև ներկայացվում է 2012թ. մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.49	2	0.55	33	2.78	34	4.23
Արագածոտն	2	1.22	11	1.68	1	0.24	2	0.42	48	97.70	0	0.00	16	4.28	4	0.52
Արարատ	10	6.10	2	0.20	2	0.22	3	0.30	98	38.85	0	0.00	54	4.72	2	0.01
Արմավիր	9	28.41	0	0.00	1	0.01	0	0.00	86	150.75	0	0.00	52	5.40	2	0.03
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	3	0.27	0	0.00	16	18.59	0	0.00	22	2.75	1	0.01
Լոռի	0	0.00	0	0.00	2	0.18	5	0.20	92	106.24	0	0.00	19	1.88	5	0.16
Կոտայք	11	8.87	0	0.00	14	1.49	26	0.79	82	64.88	1	1.55	67	5.46	8	1.21
Շիրակ	1	5.85	0	0.00	4	0.06	1	0.01	39	34.70	0	0.00	18	1.51	2	0.02
Սյունիք	2	7.00	0	0.00	0	0.00	3	0.23	16	54.83	0	0.00	1	0.08	3	0.10
Վայոց Ձոր	19	33.79	0	0.00	0	0.00	10	0.16	7	9.13	0	0.00	3	0.26	1	0.005
Տավուշ	2	7.65	0	0.00	1	0.04	0	0.00	1	0.65	1	0.30	4	0.16	2	0.04
Ընդամենը	56	98.89	13	1.88	28	2.51	50	2.11	491	576.81	4	2.40	289	29.28	64	6.34

Ստորև ներկայացվում է 2012թ. մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	<b>Ուղղակի վաճառք</b>								<b>Աճուրդ վաճառք</b>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	16	3.56	2	1.22	11	1.68	1	0.24	2	0.42
Արարատ	1	0.0002	0	0.00	0	0.00	1	0.0002	16	6.82	10	6.10	2	0.20	2	0.22	2	0.30
Արմավիր	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	8	28.26	8	28.26	0	0.00	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	1	0.03	0	0.00	1	0.03	0	0.00	2	0.24	0	0.00	0	0.00	2	0.24	0	0.00
Լոռի	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	5	0.38	0	0.00	0	0.00	2	0.18	3	0.20
Կոտայք	2	0.03	0	0.00	0	0.00	2	0.03	49	11.12	11	8.87	0	0.00	14	1.49	24	0.76
Շիրակ	1	0.03	0	0.00	1	0.03	0	0.00	5	5.89	1	5.85	0	0.00	3	0.03	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	7.23	2	7.00	0	0.00	0	0.00	3	0.23

Վայոց Ձոր	2	0.004	0	0.00	0	0.00	2	0.004	27	33.94	19	33.79	0	0.00	0	0.00	8	0.15
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	7.69	2	7.65	0	0.00	1	0.04	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>10</b>	<b>0.11</b>	<b>0</b>	<b>0.00</b>	<b>3</b>	<b>0.07</b>	<b>7</b>	<b>0.04</b>	<b>136</b>	<b>105.13</b>	<b>55</b>	<b>98.74</b>	<b>13</b>	<b>1.88</b>	<b>25</b>	<b>2.44</b>	<b>43</b>	<b>2.07</b>

2012թ. հանրապետությունում մարտին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.15 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. մարտին, 2011թ. մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 52.1%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 3-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 51.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 63.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 56.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 37.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 44.4%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	2	1.22	91.1	746.0	418.5	36	66.55	365.0	12000.0	4065.3
Ապարան						1	2.48	86.5	2727.3	687.3
Թալին						11	28.67	93.6	5494.5	584.5
Ծաղկահովիտ								79.5	1000.0	236.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	9	3.10	613.6	2721.3	2310.9	46	12.58	335.1	10833.3	2620.0
Մասիս						25	13.03	200.0	11904.8	3012.3
Վեդի	1	3.00	245.0	245.0	245.0	27	13.25	207.0	10795.1	1735.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	2	8.26	72.6	92.0	82.3	56	132.33	294.3	9090.0	1558.0
Բաղրամյան	6	20.0	622.1	837.4	765.6	5	4.30	90.6	2561.1	722.3
Վաղարշապատ						20	11.78	444.4	11764.7	2840.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						2	0.30	199.8	1875.0	387.5
Ճամբարակ						3	1.77	60.5	953.3	332.1
Մարտունի						5	1.57	51.1	2850.0	722.3
Սևան								52.2	2134.8	315.3
Վարդենիս						6	14.95	41.2	2575.1	371.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						1	0.91	170.4	6424.2	672.5
Գուգարք						4	2.20	234.6	6065.9	763.6
Սպիտակ						3	0.71	250.0	5555.5	728.1
Ստեփանավան						4	8.33	90.6	1686.6	289.7
Տաշիր						47	48.87	45.3	1384.4	137.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	7	4.94	266.7	2335.5	721.5	17	5.77	279.3	11942.7	4670.0
Եղվարդ	3	2.93	50.2	103.4	76.0	57	56.39	174.4	11971.8	2878.3
Հրազդան	1	1.00	390.0	390.0	390.0	7	1.92	130.5	10256.4	1902.2
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						20	17.87	252.0	1693.1	575.5

Ամասիա	1	5.85	124.6	124.6	124.6			40.9	261.0	128.5
Անի						3	2.65	110.6	546.9	370.0
Աշոցք						6	5.93	58.5	215.8	121.5
Արթիկ						10	8.26	79.4	1428.6	374.2
Սյունիքի մարզ										
Գորիս						1	9.60	92.6	1023.2	687.7
Կապան	2	7.00	33.3	494.5	263.9	1	0.14	120.0	841.6	334.2
Մեղրի						3	2.10	193.0	3000.0	721.3
Սիսիան						11	42.99	46.3	1977.4	490.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	0.73	87.6	241.8	190.4	5	8.29	125.0	10000.0	1865.5
Վայք	16	33.06	76.6	136.0	99.0	2	0.84	58.8	1430.7	600.0
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	672.5
Իջևան	2	7.65	73.3	140.0	106.7			267.5	9454.5	1225.6
Նոյեմբերյան						1	0.65	46.7	7368.4	833.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						11	23777.0	130.7	22200.0	2571.0
Ապարան	1	2356.0	37.8	37.8	37.8	1	2320.0	124.1	609.6	362.4
Թալին						4	16700.0	63.2	1454.8	152.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	86.3
Արարատի մարզ										
Արտաշատ	2	2238.0	819.3	819.6	819.5	18	16835.0	173.9	7140.3	892.7
Մասիս						22	15293.0	187.5	25000.0	1206.1
Վեդի						14	15085.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						22	21885.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						2	2260.0	100.0	833.3	232.5
Վաղարշապատ						25	26890.0	197.4	26528.4	1526.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	3100.0	186.6	1084.3	654.3
Գանձարակ						1	1892.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	2	2400.0	219.8	219.8	219.8	16	20570.0	119.3	5000.0	278.8
Սևան						2	1957.0	240.0	3110.4	302.3
Վարդենիս								72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	3600.0	114.3	1388.9	215.9
Գուգարք	2	1766.0	224.4	4544.1	2384.3	9	5297.0	77.9	14083.3	1067.5
Սպիտակ						7	7950.0	104.9	1348.3	204.4



Ստեփանավան						1	2000.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	8352.3	277.6	4750.4	2344.9	34	25938.7	264.5	35353.5	1956.7
Եղվարդ	7	5580.0	1279.5	2612.6	1544.9	30	23872.4	173.6	27000.0	2840.2
Հրազդան	1	1000.0	233.0	233.0	233.0	3	4821.0	117.7	34848.5	1316.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	316.3	2180.3	5237.9	4218.7	11	6818.9	113.6	18750.0	331.2
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	943.8	67.9	180.6	158.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						6	7334.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	810.0	112.2	1700.0	371.6
Կապան								67.9	2638.9	295.5
Մեղրի								68.5	632.9	190.0
Սիսիան								123.5	875.0	195.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	1800.0	96.7	7659.6	498.5
Վայք						1	750.0	120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	594.0	75.8	810.0	110.3
Իջևան	1	433.0	243.8	243.8	243.8	3	998.0	74.1	14423.1	520.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	220.0

2012թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 735 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 77.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. մարտին, 2012թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 33.9%-ով, իսկ 2011թ. մարտի համեմատ նվազել՝ 14.3%-ով:

2012թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 53 բնակարանների, 54 անհատական բնակելի տների, 371 հասարակական, 57 արտադրական նշանակության օբյեկտների, 158 միավոր /723.29 հա/ հողերի և 42 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 48 վարձակալության գործարքների /այդ թվում 2 միավոր՝ 0.02 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. փետրվարի և 2011թ. մարտի համեմատ աճել է 6 անգամ: 2012թ. մարտին հանրապետությունում վարձակալված 723.29 հա հողերից 0.38 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 722.91 հա հողերից 1.45 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.25 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 390.10 հա, որից 390.00 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. մարտին հանրապետության մարզերում վարձակալվել են 718.76 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1962 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.2%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. փետրվարի համեմատ, աճել է 19.9%-ով, իսկ 2011թ. մարտի համեմատ նվազել՝ 22.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.1%/, առանձնատների /24.4%/, հասարակական

նշանակության օբյեկտների /11.9%/ և հողերի /11.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 948 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. փետրվարի համեմատ, աճել է 2.6%-ով, իսկ 2011թ. մարտի համեմատ նվազել՝ 15.7%-ով:

2012թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 666.25 հա հողեր, որից 4.61 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 89.9%-ը կամ 598.75 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 290.92 հա, որից 287.73 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. մարտին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 49 գործարքներ, որից 31-ը՝ Երևանում: 2012թ. փետրվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.5 անգամ, ընդ որում Երևանում աճել է 82.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 6 անգամ: 2011թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 80.9%-ով, ընդ որում Երևանում՝ 83.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 73.9%-ով:

2012թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1219 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. փետրվարի համեմատ աճել է 2.4 անգամ, իսկ 2011թ. մարտի համեմատ նվազել՝ 54.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 8.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.5%/:

### ***33 կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***